Արմեն Քթոյան, *պ. գ. թ., դոցենտ*
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ
Արմինե Խառատյան, *իրավագիտության թեկնածու*
ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴՐԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր – սահմանադրական տնտեսագիտություն, տնտեսության սահմանադրական կարգավորում, տնտեսական իրավունքներ և ազատություններ, մասնավոր սեփականության իրավունք

Տնտեսության սահմանադրական հիմքերի հետազոտություններով սկզբնական շրջանում զբաղվում էին բացառապես տնտեսագետները, որոնց շարքում առանձնանում է Ջեյմս Բյուքենենը, ով 1986թ. տնտեսագիտության Նոբելյան մրցանակի արժանացավ՝ որպես հասարակական ընտրության տեսության համահիմնադիր և մեծաթիվ ուշագրավ աշխատությունների (ինչպես, օրինակ՝ «Ազատության սահմանները», «Տնտեսական քաղաքականության սահմանադրությունը») հեղինակ: Տնտեսագետների կողմից սահմանադրական տնտեսագիտության՝ որպես ամբողջական համակարգի և գիտական ինքնուրույն ուղղության ձևավորման փաստն ինքնին կարելի է մեկնաբանել որպես սահմանադրական տնտեսագիտության ծագման օբյեկտիվ անհրաժեշտության վկայություն: Այլապես կարելի էր սահմանադրական տնտեսագիտության հետազոտության առարկայական շրջանակը դիտարկել որպես իրավաբան-սահմանադրագետների բացառիկ հետաքրքրությունների տիրույթ և տնտեսագիտության տեսությունում իրենց «ներկայության» ապահովման սուբյեկտիվ, ինչ-որ առումով՝ «արհեստական» գիտական հարթակ: Մյուս կողմից, սահմանադրական տնտեսագիտության զարգացումն անհնարին կլիներ առանց տնտեսագետների և իրավաբան-սահմանադրագետների սերտ համագործակցության:

Հարկ է նկատել, որ մասնագիտական գրականությունում շրջանառվում են տնտեսական հարաբերությունների սահմանադրական կարգավորումն ուսումնասիրող գիտական ուղղության տարբեր ձևակերպումներ՝ տնտեսական սահմանադրություն, սահմանադրական տնտեսագիտություն, տնտեսական սահմանադրական իրավունք: Այնուհանդերձ, տնտեսական հարաբերությունների սահմանադրական հիմքերի հետազոտության համար առավել համահունչ է «սահմանադրական տնտեսագիտություն» եզրույթը,

որը շեշտադրում է գիտական սույն ուղղվածության առարկայական տիրույթի և ճանաչողության մեթոդաբանական ուղղվածության առանձնահատկություններն ու տարբերությունները: Ըստ այդմ, սահմանադրական տնտեսագիտության առարկայական տիրույթը կազմում են տնտեսական երևույթները՝ իրենց դրսևորման բազմակողմանիության մեջ (տնտեսական, քաղաքական, սոցիալական, սոցիոլոգիական և այլն), իսկ դրանց հետազոտության մեթոդաբանության հիմքում սահմանադրական ուղղվածությունն է, այլ կերպ՝ դրանց սահմանադրականությունը: Այսպիսով, սահմանադրական տնտեսագիտությունը «գիտական ուղղություն է, որը հետազոտում է տնտեսական նպատակահարմարության՝ պետությունում տնտեսական և քաղաքական գործունեությունը կանոնակարգող սահմանադրական իրավունքի նորմերում արտացոլված սահմանադրական զարգացման մակարդակի հետ օպտիմալ համակցության սկզբունքները»[1]: Այս համատեքստում, հարկ է խուսափել սահմանադրական տնտեսագիտության պարզունակ ընկալումից. այն սահմանադրական իրավունքի տնտեսական կամ տնտեսագիտության իրավական-սահմանադրական ուղղագիծ դիտարկում չէ միայն, այլ նաև, ու առաջին հերթին՝ երկրում տեղի ունեցող հասարակական գործընթացների տնտեսական և իրավական տեսլականների միավորման փորձ, որը հնարավորություն է ստեղծում հանրային բարդ ու բազմազան խնդիրների հետազոտություններում խուսափել միակողմանիությունից, ինչով պայմանավորված առաջնահերթ նշանակություն ունի երկրի Սահմանադրության վերլուծությունը՝ տնտեսական հարաբերությունների կարգավորման տեսանկյունից:

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում տնտեսական հարաբերությունների կարգավորման սահմանադրական նորմերն աչքի են ընկնում իրենց ծագումնաբանական բազմաշերտությամբ: Արդ, կարելի է առանձնացնել դրանց ավանդական և ժամանակակից խմբերը[2]: Տնտեսական կարգավորման ավանդական սահմանադրական նորմերից են.

- առաջին սահմանադրություններում ընդգրկված, տնտեսական հարաբերությունների սահմանադրական կարգավորման առանցքը կազմող նորմերը (սեփականության իրա-

---

[1] Баренбойм П.Д., Гаджиев Г.А., Лафитский В.И., Мау В.А. Конституционная экономика. М.: ЗАО Юстицинформ, 2006. С. 10.

[2] Андреева Г.Н. Экономическая конституция в зарубежных странах. М.: Наука, 2006. С. 147 - 162.

վունքը, աշխատանքի ընտրության իրավունքը, արհեստի իրավունքը, հարկադրական աշխատանքի արգելքը և այլն),

- ֆեոդալական հարաբերությունների վերածնման կանխմանն ուղղված նորմերը, որոնք նախկինում բավականին լայն տարածում ունեին, հետո աստիճանաբար անհետացան զարգացած տնտեսությամբ երկրների սահմանադրություններից՝ պահպանվելով դրանցից միայն մի քանիսում (օրինակ՝ այդպիսի որոշ դրույթներ պահպանվել են Ավստրիայի, Բելգիայի, Նորվեգիայի, Դանիայի սահմանադրություններում): Պետք է համարել, որ գործող սահմանադրություններում դրանց պահպանումը պարզապես տուրք է ավանդույթին,
- սովորական իրավունքը պահպանող նորմեր. խոսքը սովորական իրավունքի նորմերի սահմանադրական ամրագրման մասին է, երբ չնայած առկա է իրավական երկվություն, ինչը, սակայն, պատմականորեն դիտարկվել է որպես սովորական իրավունքի նորմերի կենսագործման երաշխիք կամ վերջին հնարավորություն[3],
- ստրկատիրության վերացմանը վերաբերող նորմեր (որոշ երկրների սահմանադրություններում դրանք դեռևս պահպանվում են, օրինակ՝ Կիպրոսի սահմանադրությունում):

Տնտեսական հարաբերությունների սահմանադրական կարգավորման ժամանակակից նորմերը կապված են տնտեսությունում պետության ակտիվ դերակատարությունն արտացոլող ժամանակակից սահմանադրականության երևույթների հետ: Դրանք ևս բազմաշերտ են:

Ավելի վաղ ընդունված (հիմնականում հետպատերազմյան կարգավորմանն առնչվող) նորմերը առնչվում են ագրարային ռեֆորմների, ազգայնացման, պլանավորման իրականացմանը: Դրանք ուղղված են տնտեսությունում որոշակի կարգուկանոնի սահմանմանը կամ նույնիսկ ենթադրում են պետության ակտիվ միջամտություն տնտեսական հարաբերություններում: Այս ենթախմբին կարելի է դասել նաև մենաշնորհները արգելող կամ սահմանափակող նորմերը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում առաջին պլան են մղվում մտավոր սեփականության, հեղինակային իրավունքի պաշտպանության հարցերը, ընդ որում, դրանց սահմանադրական կարգավորումը դեպքերի մեծամասնությունում ապա-

[3] Бенда-Бекман фон К. Правовой плюрализм // Человек и право: Книга о летней школе по юридической антропологии. М.: Стратегия, 1999. С. 10.

հովվում է սեփականության իրավունքի և այլ տնտեսական իրավունքների մասին դրույթները նաև այդ ոլորտի վրա տարածելու միջոցով: Այդուհանդերձ, կան երկրներ, որոնց սահմանադրություններում նմանատիպ առանձին հարցերի կարգավորման վրա հատուկ շեշտադրման համար նոր, համարժեք ձևակերպումներ են ներմուծվել (օրինակ՝ Շվեդիայում, Շվեյցարիայում, Հունաստանում):

Վերջին տարիներին տնտեսական հարաբերություններում նոր երևանգներ են ավելացել՝ գլոբալացման գործընթացների ակտիվացմամբ, բնապահպանական խնդիրների խորացմամբ պայմանավորված, սակայն այս հարցերը սահմանադրական կարգավորման հարթությունում դեռևս համարժեք ուշադրության չեն արժանացել, ինչը առաջին հերթին պետք է բացատրել սահմանադրական կարգավորման նորմատիվային համակարգի ոչ բավարար ճկունությամբ: Ըստ այդմ, այս ոլորտի սահմանադրական կարգավորումը կարելի է դիտարկել որպես սահմանադրական իրավունքի զարգացման ուղղություններից մեկը:

Տնտեսագիտության սահմանադրական համատեքստը հնարավորություն է տալիս տնտեսական որոշումներին հաղորդել երկարաժամկետ ռազմավարական տրամաբանություն, որը հիմնված է իրավական պետության, արդարության և մարդկանց բարեկեցության սահմանադրական գաղափարների վրա: Սահմանադրական տնտեսագիտությունը փորձում է հաշվի առնել գիտելիքի այլ բնագավառների և առաջին հերթին՝ տնտեսագիտության ձեռքբերումները՝ սահմանադրական իրավունքի արժեքների հաստատման, բացատրման և զարգացման համար: Դրա առջև դրված է ինչպես տեսական, այնպես էլ գործնական խնդիրների լայն շրջանակ:

Գործնական խնդիրների շարքում է տնտեսության արդյունավետ զարգացման իրավասահմանադրական նախադրյալների բացահայտումը: Բացի այդ, սահմանադրական տնտեսագիտության կարևոր ուղղություններից է հանդիսանում սահմանադրական սկզբունքների և արժեքների մեկնաբանության համար տնտեսագիտական մոդելների, գործիքների, օրինաչափությունների օգտագործումը: Պետությունների մեծ մասի սահմանադրությունները երաշխավորում են տնտեսական գործունեության ազատությունը, մրցակցության, մասնավոր սեփականության պաշտպանությունը: Սակայն այդ երաշխիքների իրական գործադրման համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես է աշխատում շուկան, ինչ է մրցակցությունը և ինչու է պետությանն անհրաժեշտ սեփականության իրավունքի պաշտպանությունը: Օբյեկտիվ տնտեսագիտական օրինաչափությունները մեծապես կանխորոշում են սահմա-

նադրական սկզբունքների և նորմերի բովանդակությունը, իսկ դրանց անտեսումը բերում է տնտեսական անկման, տնտեսական գործունեության արդյունավետության նվազման[4]:

Սահմանադրական տնտեսագիտության շրջանակներում հետազոտական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների մեկ այլ խումբ վերաբերում է տնտեսական հարաբերություններում պետության մասնակցության, տնտեսական խնդիրների պետական կարգավորման սահմանների հստակեցմանը: Սահմանադրական իրավունքի զարգացման պատմությունը վկայում է, որ առաջին (այսպես կոչված՝ «հին») սահմանադրություններում գլխավոր խնդիրներից մեկը, եթե ոչ՝ ամենագլխավորը, հասարակական, և մասնավորապես՝ տնտեսական հարաբերություններում (հարկային, սեփականության, ֆինանսական հարաբերություններ) պետական (արքունական, թագավորական) իշխանության սահմանափակումն էր: Օրինակ՝ Անգլիայի պառլամենտի կողմից ինքնուրույնության ձեռքբերումը հարկերի սահմանման իրավասությունը նվաճելու համար պայքարի արդյունք հանդիսացավ: Արդի պայմաններում սահմանադրությունը վերստին կատարում է պետության սահմանափակման դերը: Հատկանշական է, որ մի կողմից սահմանադրությունը կարգավորիչ ներգործություն ունի պետության, հասարակության և անհատի վրա, իսկ մյուս կողմից, պետությունն իր հերթին հանդիսանում է հասարակական հարաբերությունները կարգավորող առանցքային ինստիտուտ: Ընդսմին, պետությունը հանդես է գալիս թե որպես հանրային հարաբերությունների սուբյեկտ, թե որպես կարգավորիչ: Այս առումով, սահմանադրական նորմերի միջոցով պետության իշխանության սահմանների հստակեցումը առանցքային նշանակություն ունի երկրում տնտեսական հարաբերությունների զարգացման համար:

Տնտեսական հարաբերությունների սահմանադրական կարգավորման հետազոտություններում խնդիրների մեկ այլ խումբ առնչվում է սեփականության իրավունքի ինստիտուտի հետ: Այս հարաբերությունների սահմանադրական կարգավորումն, ըստ էության, պայմանավորում է տնտեսության տիպը: Այսպես, պետական սեփականության գերիշխանությունն ամրագրող սահմանադրական կարգավորումից բխում է երկրի տնտեսության «կենտրոնացված-պլանային», որոշ իմաստով՝ «հանրային» ու «համայնավարական» տիպը:

---

[4] Гаджиев Г.А., Баренбойм П.Д., Лафитский В.И., Мау В.А., Захаров А.В., Мазаев В.Д., Кравченко Д.В., Сырунина Т.М. Конституционная экономика. М.: ЮСТИЦИНФОРМ, 2010. С. 22.

Սահմանադրական տնտեսագիտության հետազոտության մեկ այլ կարևոր ուղղություն են հանդիսանում տնտեսական իրավունքներն ու ազատությունները, որոնց սահմանադրական կարգավորման հիմքը կազմում են, մասնավորապես, տնտեսական գործունեության ազատության, միասնական տնտեսական տարածության, սեփականության բազմաձևության և տարբեր ձևերի իրավահավասարության, մրցակցության պաշտպանության, պետության սոցիալական բնույթի, ձեռնարկատիրության սահմանադրական երաշխիքների, հիմնական տնտեսական ազատությունների սահմանափակման հնարավորության մասին դրույթները:

Տնտեսական հարաբերությունների սահմանադրական կարգավորման խնդիրների շարքում առանձին տեղ են գրավում ֆինանսական ոլորտին առնչվող հարցերը: Ավելին, արդի պայմաններում ֆինանսական հարաբերությունների առանձնակի նշանակությամբ և հարաբերական ինքնուրույնությամբ պայմանավորված, որոշ հետազոտողներ առանձնացնում են «ֆինանսական սահմանադրություն» հասկացությունը[5]: Ընդհանուր առմամբ, հետազոտական այս ուղղությունը ընդգրկում է հարկաբյուջետային հարաբերությունների, ֆինանսաբանկային համակարգի սահմանադրաիրավական կարգավորման հարցերը: Այստեղ հատուկ կարևորություն ունեն պետության կողմից հարկերի գանձման, իսկ հասարակության կողմից՝ հարկերի վճարման պարտավորության սահմանադրական ամրագրումը, բյուջետային գործընթացի սահմանադրական և տնտեսական կարգավորումների արդյունավետ զուգակցումը, Կենտրոնական բանկի տնտեսական դերի առանձնահատկություններից բխող իրավական կարգավիճակի ամրագրումը, բանկային համակարգի կայունությունն ապահովող սահմանադրաիրավական նորմերի կիրառումը:

Սահմանադրական տնտեսագիտության հետազոտական մեկ այլ ուղղությունն է հանդիսանում տնտեսության հակաճգնաժամային կառավարման սահմանադրաիրավական սկզբունքների և մեխանիզմների մշակումն ու կիրառումը: Հետազոտական այս ուղղությունն առանձնակի իմաստ ու արդիականություն է ստանում 2007-2009թթ. Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարման, նաև՝ հետագա ճգնաժամերի կանխարգելման կամ դրանց հնարավոր բացասական ազդեցությունների մեղմման իրավական կայունարարների սահմանադրական ներկառուցման համատեքստում:

Այսպիսով, տնտեսական հարաբերությունների սահմանադրական կարգավորման մեխանիզմների ու սկզբունքների կենսագոր-

---

[5] Андреева Г.Н. О месте концепции «экономической конституции» в европейском дискурсе // Журнал российского права. 2007. № 12.

ծումը, տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակադրումից ելնելով սահմանադրաիրավական նորմերի կատարելագործումը արդիական խնդիր են հանդիսանում, ինչը պայմանավորում է սահմանադրական տնտեսագիտության օբյեկտիվ անհրաժեշտությունը և դրա առարկայական բազմաշերտ ու բազմերանգ տիրույթի շրջանակներում հետազոտությունների խորացման կարևորությունը:

АННОТАЦИЯ

Армен Ктоян
Армине Харатян

ОБЩАЯ ПРОБЛЕМАТИКА И СОДЕРЖАНИЕ КОНСТИТУЦИОННОЙ ЭКОНОМИКИ

Ключевые слова – *конституционная экономика, конституционное регулирование экономики, экономические права и свободы, право частной собственности.*

Конституционная экономика относится к конституционному регулированию экономических отношений, ее предметная область составляют конституционные принципы и нормы, направленные на регулирование разнообразных экономических отношений. В статье проанализирована сущность конституционной экономики, исследованы ее основная проблематика и содержание. Также представлена классификация норм конституционного регулирования экономических отношений, в контексте их происхождения.

ANNOTATION

Armen Ktoyan
Armine Kharatyan

MAIN ISSUES AND CONTENTS OF THE CONSTITUTIONAL ECONOMY

Keywords – *constitutional economy, constitutional regulation of economy, economic rights and freedoms, right of a private property.*

The constitutional economy belongs to the constitutional regulation of the economic relations, its subject framework consists of constitutional principles and norms directed on regulation of the various economic relations. In article the essence of the constitutional economy, its main issues and contents are analysed. Classification of norms of the constitutional regulation of the economic relations, in the context of their origin is also presented.